

**ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆԸ ՆԵՐԿԱ Է ԳՏՆՎԵԼ «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ 2023-2024» ԲՐԱՈՒՆ ՄՈՍԹԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐԶՈՒՅԹԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՒԼԻՆ**

26.02.2024 15:06



Փետրվարի 24-ին և 25-ին Երևանում առաջին անգամ անցկացվել է «Իրավաբանական խորհրդատվության 2023-2024» Բրաուն Մոսթեն միջազգային մրցույթի ազգային փուլը:

Մրցանակաբաշխության արարողությանը մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը և ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրենի պաշտոնակատար Ռեբեքա Ուայթը, որոնք հաղթող թիմին հանձնել են մրցույթի գավաթը:

Միջոցառման ընթացքում ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը նաև ելույթով է հանդես եկել:

Կարևորելով Հայաստանում առաջին անգամ իրավաբանական խորհրդատվության միջազգային մրցույթ անցկացնելու փաստը՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահը մասնավորապես նշել է.

**«Մրցույթի թիրախն իրավաբանական խորհրդատվությունն է, որը շատ գովելի և ուրախալի է: Իրավաբանական խորհրդատվությունը փաստաբանի աշխատանքի մեջ այն առանցքային հատվածն է, որտեղ ձևավորվում են փաստաբանի և վստահորդի միջև հարաբերությունները: Ի վերջո, այստեղ զուգորդվում են ինչպես իրավաբանի մասնագիտական կարողությունները, այլև, ոչ պակաս կարևորությամբ, հոգեբանի հմտությունները: Կարծում եմ, որ մրցույթի մասնակիցները հետագայում իրենց մասնագիտական շարունակությունը կտեսնեն փաստաբանական համայնքում: Շնորհավորում եմ մասնակիցներին, և մաղթում եմ հաջողություն մրցույթի միջազգային փուլին»,-**ասել է Սիմոն Բաբայանը:

Նշենք նաև, որ նախաձեռնությունն իրականացվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Հայաստանի արդարադատության ոլորտի աջակցության ծրագրի շնորհիվ:

Հաղթող թիմի անդամները սույն թվականի ապրիլին կմեկնեն Լեհաստան՝ ներկայացնելու Հայաստանը մրցույթի միջազգային փուլին:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```